Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Արագածի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կարիքների համար ԱՄԱՀ-ԱՐԱԳԱԾԿԾ-ԳՀԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

Ք.Ապարան *«29» Հոկտեմբերի 2018թ.*
ժ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ **Աղաբեկ Մկրտչյան – Մեխանիզատոր- եռակցող**

Հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Խալաթյան – տրակտորիստ - կոմբայնավար

Միշա Հովհաննիսյան - Փականակագործ

Գնումները համակարգող՝ **Միհեր Ամիրյան**

Օրակարգ

1. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

Ընդունել ի գիտություն որ.

1.1 **«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն:**

1.2 **Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԱՊԱՐԱՆԻ ԾՇՇՁ» ԲԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում կողմ - 3, դեմ - 0:

3. **ԱՄԱՀ-ԱՐԱԳԱԾԿԾ-ԳՀԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին և 2-րդ կետերը՝ «ԱՄԱՀ-ԱՐԱԳԱԾԿԾ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԱՊԱՐԱՆԻ ԾՇՇՁ» ԲԲԸ –ին՝ 1-ն չափաբաժնի համար:

3.2 **Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի՝ անգործության ժամկետ չի սահմանվում:**

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը. և հաղթող մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակիցների հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ** -3, **դեմ** – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝		Աղաբեկ Մկրտչյան
հանձնաժողովի անդամներ՝		Արթուր Խալաթյան
		Միշա Հովհաննիսյան
Գնումները համակարգող ՝		Միեր Ամիրյան